

պատարագին յիշատակեն, եւ եկած փարձեն ա. ա. փարս ժամուց ժաւարարներուն, ա. ա. փարս եւս իւղագին վասկերուն, իսկ զաւելորդն՝ իսակին եւ պախանային սերտեքին խարձին եւ Ս. Յակոբայ միաքանիցն հասցազին սակ: Ոյ ոք զայս իմ կրտսեր յիշատակս քի՛ Աստուած զինկն ի կենաց գրոց ջնշի: ՌՃ (= 1651)» . այս թուականը սխալ գրուած է, պէտք է ըլլայ 1727: Յիշեալ պարտէզը ու իջեանը մինչև այսօր մնացած են անեղծ ու անոնց եկամուտները յատկացուած են իրենց նպատակին:

Հաննէ (անդ, էջ 66) Գրիգոր Շղթայակիրի 1727ի մէկ շինարարութիւնը կը յիշատակէ « . . . հարաւային կողմն վանից որ է ի ներքոյ բերդին՝ ի փուլ եկեալ կործանեցաւ (1725) եւ փլոյց գլխաւորօրէն փտեալ կամարսն եւ եղեւ մեծ նեղութիւն ազգիս մերոյ: Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ ի նոյն թուին երջանիկ պատրիարքն սրբոյ քաղաքիս Երուսաղէմի Գրիգոր Աստուածաբան վարդապետն՝ մեծ աշխատանօք հրաման առեալ ի քաղաքապետաց եւ ի դատաւորաց եւ ի մեծամեծաց քաղաքիս, նոր ի հիմանէ շինեաց զութ կամարս սրբատաշ քարիւ բարձր, լայն եւ պայծառ: Որ եւ ի վերոյ տանեաց այսց կամարաց կառոյց փայտեայ կամարս ըստ առաջին հին շինութեանց եւ ա՛յլ գեղեցիկ: Կանգնեաց եւս սեղան յանուն սրբոյն Նիկողայոսի: Ի ՌՃԶԶ թուին գնալով ինքեան անդ՝ հրաւիրեալ ի միւս ազգաց ի պատիւ իւրոյ սրբութեան: Ուստի եւ նուաասու ընդ նմա զուով հանդերձ միաբան եղբարքք, ակննատես եղէ օրհնութեան նորակերտ եկեղեցւոյն եւ օծման սուրբ սեղանոյն»: Հաննէի այս վերջին տողերը հարկ կ'ըլլայ լուսաբանել թէ Ս. Նիկողայոս եկեղեցին արդէն գոյութիւն ունէր նախ քան Շղթայակիր, հետեւաբար կատարուածը լոկ նորոգութիւն մ'էր, որուն օրհնութիւնն է օծումն ալ անհրաժեշտ էր. 1683ի Սարգիս վրդ. ի Երուսաղէմի ձեռագիր պատմութիւնը ոչ միայն կը յիշատակէ Ս. Նիկողայոսի եկեղեցւոյն գոյութիւնը, այլ նաև աւագ սեղանէն զատ կը ծանօթագրէ անոր երկու կողմի փոքր սեղանները՝ Ս. Պետրոս եւ Ս. Յակոբ անուամբ:

1765ին Գանձակեցի Կարապետ պատրիարք Յոպպէի մէջ 5000 դահեկանով կը զնէ Սեղբեստրոս ամիրային սեպհական կալուածները՝ երկու տուն, երեք վաճառանոց եւ երկու հրապարակ, որոնց վարձքերը կ'ստանար Սեղբեստրոսի Մերկեր որդին: